Արձանագրություն N 5

«ՍՄ-ԲԸՀԱՇՁԲ-2017/1» ծածկագրով արտակարգ կամ անկանխատեսելի իրավիճակի առաջացման հիմքով հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի շարունակության

ք. Կապան

«07» ապրիլ 2017թ.
ժամը 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Ի. Հայրապետյան
Հանձնաժողովի անդամներ	Ժ. Բաբայանը և Ն. Մովսիսյանը
Հանձնաժողովի քարտուղար՝	Տ. Մկրտչյան

I. Արտակարգ կամ անկանխատեսելի իրավիճակի առաջացման հիմքով հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգի հայտերի բացման նիստի շարունակության մասին

(Ի. Հայրապետյան)

1. Հրավերով սահմանված՝ հայտերի կազմման և ներկայացման, բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին.

ա/ համապատասխանում է՝

«Կապանի ՃՇՇ» ՍՊԸ-ի և «Մավշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը և գնահատվել են «Բավարար»

բ/ չեն համապատասխանում՝

«Արհովշին» ՍՊԸ–ի, «Ոսմար» ՍՊԸ-ի, «Էլդոգար» ՍՊԸ-ի, «ԿՈՄԵՐՑԻԱԼ ՊԱՐՏՆԵՐՍ» ՍՊԸ-ի, Մեծ հիմք Ա/Կ-ի, «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի, «Գուրոս» ՍՊԸ-ի և «Արտադրական Բազա» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտերը և գնահատվել են «անբավարար» հետևյալ հիմնավորմամբ.

սույն ընկերությունների կողմից ներկայացված հայտերում վճարման պահանջագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>> համաձայն, ինչպես նաև Մեծ հիմք Ա/Կ-ի ներկայացրած փաստաթղթերում բացակայում է էլեկտրոնային ստորագրությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա հանձնաժողովը որոշեց՝

ա/ 1-ին չափաբաժնի համար հաղթող ճանաչել «Կապանի ՃՇՇ» ՍՊԸ-ին,

3-րդ չափաբաժնի համար հաղթող ճանաչել «Մավշին» ՍՊԸ-ին,

բ/ 2-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած ՀՀ «Գնումների մասին» օրենքի 35-րդ հոդվածի, 1-ին կետի, 1-ին ենթակետի հիման վրա հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին,

գ/ հաստատել չկայացած ընթացակարգի մասին հայտարարությունը

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

3. Առաջարկել ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

4. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ին, ՀՀ ք. Կապան, Նժդեհի 1, ՀՀ Սյունիքի մարզպետարան 4-րդ հարկ, N 404 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ի. Հայրապետյան

Անդամ՝ _____ Ժ. Բաբայան

_____ Ն. Մովսիսյան

Քարտուղար՝ _____ Տ. Մկրտչյան